



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 124651 գործարքներ, որոնց քանակը, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 17.3%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 32808 օտարման գործարքների 80.2%-ը կազմել են առուվաճառքները, 18.7%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 38.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.8%-ով: 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 9344 առուվաճառքի գործարքների 65.7%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.1%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	հունվար- սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2010թ.
Կենտրոն	473300	468700
Արաբկիր	356200	382700
Քանաքեռ-Զեյթուն	276300	288200
Նոր-Նորք	232200	238600
Ավան	233800	241900
Էրեբունի	249200	250800
Շենգավիթ	242200	254300
Դավթաշեն	261400	274600
Աջափնյակ	237800	238800
Մալաթիա-Սեբաստիա	225500	243000
Նուբարաշեն	141600	145800
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	266300	275200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 3.3%-ով

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2890 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 17.2%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար- սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2010թ.

Արագածոտն	Աշտարակ	134200	142600
	Ապարան	42100	45300
	Թալին	48100	53800
Արարատ	Արտաշատ	89700	95300
	Մասիս	128700	130300
	Վեդի	87600	94900
	Արարատ	83700	86900
Արմավիր	Վաղարշապատ	166500	161600
	Արմավիր	116200	123100
	Մեծամոր	79800	83800
Գեղարքունիք	Սևան	91400	96100
	Գավառ	47900	46600
	Մարտունի	78700	85500
	Վարդենիս	33200	32700
	Ճամբարակ	18500	19600
Լոռի	Վանաձոր	92300	93700
	Ստեփանավան	53800	58400
	Սյիտակ	72200	81200
	Ալավերդի	33300	32000
	Տաշիր	35300	36000
	Թումանյան	6000	6100
	Շամլուղ	3400	3400
	Ախթալա	13800	14200
Կոտայք	Աբովյան	143700	159700
	Նոր Հաճն	133700	130500
	Բյուրեղավան	99300	105400
	Եղվարդ	121400	115800
	Հրազդան	63300	63600
	Ծաղկաձոր	179200	181100
	Չարենցավան	86400	78900
Շիրակ	Գյումրի	107300	121700
	Արթիկ	59500	60400
	Մարալիկ	30500	30700
Սյունիք	Գորիս	123900	139400
	Կապան	106800	101000
	Սիսիան	89100	80100
	Մեղրի	54900	59300
	Ագարակ	33000	33700
	Քաջարան	56800	60700
	Դաստակերտ	7800	8000
Վայոց Ձոր	Վայք	74300	71900
	Եղեգնաձոր	109000	108200
	Ջերմուկ	121400	115200
Տավուշ	Դիլիջան	94900	103600
	Իջևան	137500	139500
	Բերդ	42800	42100
	Նոյեմբերյան	33600	33900
	Այրում	23400	24100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 2.8%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3819 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 918, մարզերում միասին վերցրած՝ 2901: 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 31.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 31.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 31.8%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	հունվար-սեպտեմբեր 2009թ.	հունվար-սեպտեմբեր 2010թ.
Կենտրոն	498200	486100
Արաբկիր	394600	394200
Քանաքեռ-Զեյթուն	304400	293700
Նորք-Մարաշ	302100	285800
Ավան	264800	248700
Էրեբունի	278500	258100
Շենգավիթ	269200	261100
Դավթաշեն	295700	283500
Աջափնյակ	271900	248000
Մալաթիա-Սեբաստիա	260000	249200
Նուբարաշեն	156700	148500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	299600	287000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 4.2 %-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար-սեպտեմբեր 2010թ.	հունվար- սեպտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140900	148700
	Ապարան	44500	49400
	Թալին	51200	56600
Արարատ	Արտաշատ	98000	101300
	Մասիս	140100	133900

	Վեղի	92500	98900
	Արարատ	86200	92800
Արմավիր	Վաղարշապատ	176200	169200
	Արմավիր	124300	127500
Գեղարքունիք	Սևան	98800	98900
	Գավառ	54900	50000
	Մարտունի	82700	89200
	Վարդենիս	37600	35500
	Ճամբարակ	22100	22300
Լոռի	Վանաձոր	100400	99700
	Ստեփանավան	57400	62600
	Սպիտակ	75000	84200
	Ալավերդի	36400	35800
	Տաշիր	38700	39500
	Թումանյան	10300	10700
	Շամլուղ	7400	7500
	Ախթալա	17600	18200
Կոտայք	Արուսյան	162500	170500
	Նոր Հաճն	142600	136500
	Բյուրեղավան	109100	110100
	Եղվարդ	128800	127700
	Հրազդան	71200	67100
	Ծաղկաձոր	284800	312200
	Չարենցավան	94100	82200
Շիրակ	Գյումրի	116800	126700
	Արթիկ	63000	63200
	Մարալիկ	33900	32700
Սյունիք	Գորիս	129500	144900
	Կապան	113500	105300
	Սիսիան	93100	85300
	Մեղրի	57700	61900
	Ագարակ	35600	35500
	Դաստակերտ	10400	10500
Վայոց Ձոր	Վայք	79700	75700
	Եղեգնաձոր	114700	115200
	Ջերմուկ	109300	120300
Տավուշ	Դիլիջան	108200	108800
	Իջևան	143700	143700
	Բերդ	45500	44500
	Նոյեմբերյան	36600	35900
	Այրում	25200	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 1.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 11341 միավոր /6983.54 հա/ հողեր, որից Երևանում` 601 միավոր /81.17 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 5481 միավոր /6193.45 հա/, որից Երևանում` 23 միավոր /3.94 հա/,

- բնակելի կառուցապատման հողեր՝ 4218 միավոր /409.37 հա/, որից Երևանում՝ 397 միավոր /25.19 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1392 միավոր /147.68 հա/, որից Երևանում՝ 160 միավոր /47.11 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 154 միավոր /196.19 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /4.94 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 56 միավոր /25.95 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 26 միավոր /3.70 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 13 միավոր /7.09 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.11 հա/:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 10137 միավորի /6407.21 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 502 միավոր /71.26 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1040 միավոր /528.20 հա/, որից Երևանում՝ 90 միավոր /9.59 հա/ և փոխանակության գործարքներ՝ 164 միավոր /48.13 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.32 հա/:

Հանրապետությունում 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.0%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 16.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 8.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 19.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2145.41 հա, որից 2085.75 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.5%-ը կամ 2580 գործարքներ /1649.99 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 113 միավոր /9.86 հա/, իսկ 73.8%-ը կամ 7478 միավորը /4651.99 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 375 միավոր /61.12 հա/:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 79 գործարք /105.23 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	5	1.20	58	3.17	50	5.48	16	2.45	16	3.73	277	18.32	66	36.62
Արագածոտն	89	98.52	3	1.76	12	2.21	60	3.57	451	361.39	0	0.00	263	48.49	17	1.20
Արարատ	34	71.28	16	8.21	32	2.48	52	1.77	499	276.33	6	4.92	453	38.81	23	0.68
Արմավիր	95	347.18	12	1.84	12	0.70	74	5.03	579	1738.57	10	6.80	443	42.90	41	1.57
Գեղարքունիք	70	89.90	7	2.23	110	9.11	64	6.56	618	408.11	2	0.11	135	15.51	16	1.34
Լոռի	45	208.60	11	6.48	106	9.66	178	4.30	492	291.17	0	0.00	190	24.76	42	1.82
Կոտայք	115	129.38	7	1.10	283	22.54	247	9.47	904	368.95	25	11.94	659	61.04	76	35.12
Շիրակ	16	42.93	8	2.29	132	5.46	70	1.45	269	283.61	4	129.92	90	21.32	24	2.68
Սյունիք	50	432.86	8	0.42	17	1.31	61	3.54	200	214.45	2	0.88	147	10.70	16	1.19
Վայոց Ձոր	26	45.27	0	0.00	15	1.09	44	2.26	60	87.08	0	0.00	39	3.38	11	0.65
Տավուշ	16	18.27	7	3.82	193	15.54	20	2.17	162	67.27	2	0.46	84	9.49	10	2.71
Ընդամենը	556	1484.19	84	29.35	970	73.27	920	45.60	4250	4099.38	67	158.76	2780	294.72	342	85.58

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, տրանսպորտի օբյեկտների և ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	96	7.84	5	1.20	50	1.79	41	4.85	17	2.00	0	0.00	0	0.00	8	1.37	9	0.63
Արագածոտն	8	1.65	0	0.00	4	1.44	4	0.21	155	104.30	88	98.41	3	1.76	8	0.78	56	3.35
Արարատ	9	1.47	3	1.37	1	0.03	5	0.07	123	80.57	32	69.56	13	6.84	31	2.46	47	1.71
Արմավիր	22	0.34	2	0.10	0	0.00	20	0.24	162	353.17	86	345.96	10	1.74	12	0.69	54	4.78
Գեղարքունիք	7	0.22	0	0.00	0	0.00	7	0.22	244	107.58	70	89.90	7	2.23	110	9.11	57	6.34
Լոռի	46	5.25	2	4.18	10	0.47	34	0.60	291	223.38	42	208.19	9	2.30	96	9.19	144	3.70
Կոտայք	147	11.56	0	0.00	113	10.49	34	1.07	493	147.13	103	125.57	7	1.10	170	12.06	213	8.40
Շիրակ	50	0.98	3	0.15	29	0.62	18	0.21	176	51.16	16	42.93	5	2.14	103	4.85	52	1.24
Սյունիք	16	2.14	0	0.00	2	0.22	14	1.92	116	435.05	46	431.92	8	0.42	15	1.09	47	1.62
Վայոց Ձոր	8	0.28	0	0.00	1	0.09	7	0.19	74	48.00	23	44.91	0	0.00	14	1.01	37	2.08
Տավուշ	22	2.11	1	0.37	12	0.36	9	1.38	212	37.11	14	17.68	6	3.45	181	15.19	11	0.79
Ընդամենը	431	33.84	16	7.37	222	15.51	193	10.96	2063	1589.45	520	1475.03	68	21.98	748	57.80	727	34.64

Հանրապետությունում 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 36 գործարքներ /9.16 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.2%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 32.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 3.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 8.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 33.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 8.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 13.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը/հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը/հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	75	49.21	50.0	919.2	231.5	311	178.78	365.0	12000.0	4345.3
Ապարան						42	26.40	86.5	2727.3	582.4
Թային	12	49.05	37.6	111.5	54.8	64	105.90	93.6	5494.5	524.2
Ծաղկահովիտ	1	0.16	2450.2	2450.2	2450.0	30	45.57	79.5	1000.0	243.0
Արարատի մարզ										
Արտաշատ	16	34.29	65.1	2260.0	712.3	217	92.67	335.1	10833.3	2283.5
Մասիս	10	17.44	65.7	2576.3	540.4	92	66.18	200.0	11904.8	2988.7
Վեդի	6	17.83	60.6	994.3	396.4	178	113.37	207.0	10795.1	1811.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	36	51.59	35.7	1614.9	203.3	247	160.96	294.3	9090.0	1253.1
Բաղրամյան	30	275.51	33.8	622.1	119.1	99	1142.57	90.6	2561.1	704.9
Վաղարշապատ	20	18.86	33.0	1600.0	594.3	217	423.94	444.4	11764.7	3121.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	49	36.93	38.4	464.4	261.2	387	151.09	199.8	1875.0	408.7
Ճամբարակ	10	23.13	109.3	1440.0	570.3	92	53.03	60.5	953.3	284.4
Մարտունի	6	11.44	122.2	591.3	315.8	41	7.77	51.1	2850.0	619.8
Սևան	4	16.60	225.0	3488.4	1649.5	33	22.93	52.2	2134.8	255.7
Վարդենիս	1	1.80	59.4	59.4	59.4	64	171.89	41.2	2575.1	446.4
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.15	1100.0	1100.0	1100.0	130	55.33	170.4	6424.2	848.2
Գուգարք	22	192.27	44.0	816.0	313.5	113	30.94	234.6	6065.9	1080.2
Սպիտակ	8	2.75	100.0	745.5	267.1	8	2.56	250.0	5555.5	637.4
Ստեփանավան	11	12.31	160.1	944.9	393.3	75	70.83	90.6	1686.6	353.0
Տաշիր						165	128.80	45.3	1384.4	177.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	46	68.47	48.5	2089.4	364.3	440	83.43	279.3	11942.7	4637.8
Եղվարդ	40	36.69	74.3	3881.6	553.7	333	218.60	174.4	11971.8	3463.0
Հրազդան	17	20.41	95.3	1330.0	849.8	119	64.70	130.5	10256.4	1750.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	12.67	158.9	297.0	261.1	77	91.31	252.0	1693.1	539.4
Ամասիա	3	17.99	76.0	123.9	97.7	13	38.36	40.9	261.0	129.8
Անի	6	5.60	30.0	358.7	163.9	78	81.65	110.6	546.9	304.6
Աշոցք	3	5.76	119.9	3970.0	1425.8	42	37.22	58.5	215.8	111.5
Արթիկ	1	0.90	520.0	520.0	520.0	54	26.43	79.4	1428.6	273.9

Սյունիքի մարզ										
Գորիս	11	2.18	550.0	1200.0	631.3	54	58.09	92.6	1023.2	529.5
Կապան	13	25.28	76.8	698.5	266.4	10	4.30	120.0	841.6	298.9
Մեղրի	22	404.46	21.5	6300.0	3160.8	21	4.41	193.0	3000.0	627.9
Սիսիան						113	144.97	46.3	1977.4	329.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	38.74	34.4	629.8	168.2	46	80.69	125.0	10000.0	1622.5
Վայք	8	6.17	45.4	182.9	116.5	14	6.39	58.8	1430.7	510.2
Տավուշի մարզ										
Բերդ	2	1.71	361.6	929.5	645.6	53	13.89	213.3	3783.8	569.1
Իջևան	10	11.83	148.2	9600.0	2211.9	41	15.24	267.5	9454.5	1116.7
Նոյեմբերյան	2	4.14	289.8	294.5	292.2	68	38.15	46.7	7368.4	825.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1493.0	36.8	194.5	115.7	210	402751.0	130.7	22200.0	2572.5
Ապարան	4	3210.5	245.0	2362.0	781.5	31	36404.0	124.1	609.6	276.5
Թալին	2	3050.0	85.0	304.2	194.6	12	22530.0	63.2	1454.8	143.7
Ծաղկահովիտ						7	19000.0	60.0	214.3	78.8
Արարատի մարզ										
Արտաշատ	21	18926.0	145.0	5203.5	744.6	107	125973.0	173.9	7140.3	893.5
Մասիս	8	4009.0	541.3	3118.6	1447.4	256	172609.0	187.5	25000.0	1215.9
Վեդի	2	1635.0	687.7	818.3	753.0	88	87398.0	126.1	5000.0	661.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	10	5708.0	277.7	3469.4	1573.9	149	174856.5	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	16	23027.0	100.0	833.3	192.1
Վաղարշապատ	1	45.0	3654.0	3654.0	3654.0	276	229512.0	197.4	26528.4	1530.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	33	33555.0	115.8	341.5	224.0	35	36131.0	186.6	1084.3	483.0
Ճամբարակ	26	18358.0	108.0	266.7	130.6	12	10705.0	71.3	2286.2	143.8
Մարտունի	25	13332.0	55.4	248.7	126.3	65	76327.2	119.3	5000.0	274.6
Սևան	26	25818.0	113.3	521.9	235.3	11	13155.5	240.0	3110.4	234.9
Վարդենիս						12	18790.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	5	413.0	556.5	931.6	631.8	8	6846.0	114.3	1388.9	209.9
Գուգարք	16	5813.0	79.3	5202.7	2339.7	24	38181.0	77.9	14083.3	802.0
Սպիտակ	64	79584.0	47.7	146.3	74.3	139	189805.0	104.9	1348.3	199.4
Ստեփանավան	10	4769.0	74.5	555.3	302.7	14	9278.0	88.2	1666.7	153.4
Տաշիր	1	1280.0	83.3	83.3	83.3	4	2521.6	45.3	400.0	78.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	99	62212.6	407.5	4076.0	1965.8	317	296190.0	264.5	35353.5	2010.0
Եղվարդ	60	47389.0	419.1	4750.2	2635.9	287	249165.0	173.6	27000.0	2861.1

Հրազդան	11	10966.0	430.0	4750.6	1439.7	50	55606.0	117.7	34848.5	1334.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	52	23723.5	317.1	9830.2	2457.2	43	124702.7	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	24	8963.0	291.5	680.9	430.2	14	19079.0	67.9	180.6	130.6
Աշոցք						5	30110.0	40.8	144.0	60.0
Արթիկ	27	15771.0	52.5	810.0	450.2	28	39279.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	2	1450.0	972.0	1053.0	1012.5	20	18128.0	112.2	1700.0	312.3
Կապան	12	9308.8	32.0	1552.7	664.6	107	71007.0	67.9	2638.9	250.4
Մեղրի	1	185.0	440.0	440.0	440.0	14	10280.0	68.5	632.9	155.4
Սիսիան						6	7587.0	123.5	875.0	165.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	5818.0	188.1	757.5	610.5	24	24640.0	96.7	7659.6	443.2
Վայք	6	4250.0	854.0	1323.0	906.1	14	8910.0	120.7	1448.3	168.8
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	176	148797.0	158.3	3000.0	2526.8	71	81281.0	74.1	14423.1	479.4
Նոյեմբերյան	5	3057.0	110.6	1036.4	545.6	13	13615.0	125.0	1948.1	171.3

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 76 գործարքներ 11.12 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ /2.34 հա/ Գեղարքունիքի, 47-ը՝ /7.03 հա/ Շիրակի, 19-ը՝ Լոռու /1.59 հա/ և 2-ը՝ /0.16 հա/ Կոտայքի մարզերում:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7764 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 84.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 23.9%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 483 բնակարանների, 284 անհատական բնակելի տների, 3230 հասարակական, 567 արտադրական նշանակության օբյեկտների, 2878 միավոր /13988.50 հա/ հողերի, 319 ավտոտնակների և 3 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 111 վարձակալության գործարքների, այդ թվում 55 միավոր /8.16 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 58.7%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 13988.50 հա հողերից 82.03 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 13906.47 հա հողերի 753.07 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 48.32 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 4776.44 հա, որից 4730.22 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 5823.64 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող

գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	4	344.39	110	393.04
Արարատ	1	5.00	122	875.96
Արմավիր	0	0.00	152	649.20
Գեղարքունիք	25	502.70	259	2298.97
Լոռի	1	3.00	77	502.53
Կոտայք	0	0.00	32	319.06
Շիրակ	1	3459.50	387	1270.72
Սյունիք	13	1225.83	183	645.26
Վայոց Ձոր	0	0.00	74	32.87
Տավուշ	1	283.22	58	73.22
Ընդամենը	46	5823.64	1454	7060.83

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 15296 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 51.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.0%/, առանձնատների /23.8%/. հասարակական նշանակության օբյեկտների /12.4%/ և հողերի /12.9%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6954 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 47.8%-ով:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 7186.17 հա մակերեսով հողեր, որից 64.21 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 95.7%-ը կամ 6880.13 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.42 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 5265.56 հա, որից 5258.63 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1244 գործարքներ, որից 916-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 80.0%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 14.2%-ն՝ անհատական բնակելի տների, 3.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.0%-ն՝ ամառանոցների, 0.2%-ն՝ ավտոտնակների և 1.0%-ը՝ հողերի նկատմամբ, որից 0.4%-ը՝ գյուցատնտեսական նշանակության: 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.3 անգամ, ընդ որում Երևան քաղաքում՝ 2.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.3 անգամ:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 6 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 61.8%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում /38.5%/:

2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 19455 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 8.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.8%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն